ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N257-Ա

« 20 » ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023Թ.

ԱՆՈՒՇ ԹԱՐՎԵՐԴՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՎԴ4/0891/02/22 քաղաքացիական գործով 23.12.2022թ. վճիռը, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 06.09.2023թ. «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի և Անուշ Թարվերդյանի միջև 2023 թվականի նոյեմբերի 16-ին կնքված հաշտության համաձայնությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անուշ Թարվերդյանին 2023 թվականի նոյեմբերի 21-ից վերականգնել «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:

2. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ ապահովել Ա. Թարվերդյանի հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար, սկսած 20.05.2022 թվականից մինչև 06.09.2023 թվականը ներառյալ, միջին աշխատավարձի վճարումը՝ 3 760 000 (երեք միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ սույն որոշումը ծանուցել Ա. Թարվերդյանին:

4. 2023 թվականի նոյեմբերի 21-ից Գայանե Աբրահամյանին ազատել «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումից:

5. «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 20 -ի
N 11 որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Պոլուդնիցինա Տատյանա	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Անդամներ՝

Սարգսյան Անահիտ	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր տնտեսագետ, վարչության պետի պաշտոնակատար
Մաղաքյան Նարինե	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Հարությունյան Հուսիկ	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ